ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

***ք. Երևան***

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2021թ. դեկտեմբերի 8-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

| | |
|---|---|
| ***Նիստին մասնակցում էին՝*** | |
| ***Կոմիտեի անդամներ*** | |
| Կարեն Հովհաննիսյան | Կոմիտեի նախագահ |
| Բաբկեն Ղալոյան | Կոմիտեի անդամ |
| Արման Ալաբերքյան | Կոմիտեի անդամ |
| Տիգրան Իսրաելյան | Կոմիտեի անդամ |
| Հայկուհի Ռշտունի | Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար |

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. **03/12/21թ. «Ալաշկերտ-2»-«Գանձասար ՖԱ» (ԱԽ059) խաղի մասին. «Գանձասար ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Առաքելյանի (N 12445) հեռացման մասին (անհաւցե հայհոյանքների համար):**

---------------------------------------------------------------------------------------------------

***Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝***

Հաստատված համարել «Գանձասար ՖԱ» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Առաքելյանի (N 12445) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետով՝ «Գանձասար ՖԱ» թիմի ֆուտբոլիստ ֆուտբոլիստ Սուրեն Առաքելյանին (N 12445) որակազրկել 2 (երկու) խաղով և «Գանձասար ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրիհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով:

2. **25/11/21թ. «Ալաշկերտ-2»-«ԲԿՄԱ-2» (ԱԽ054) խաղի մասին. Ալաշկերտ-2-ի տեխնիկական գոտում գտնվող անձինք կրում էին Ռուսաստանի հավաքականի, Վեստ Արմենիա, Բանանց, Յունվենտուս, Ատլետիկո թիմերի բաճկոններ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «Ալաշկերտ-2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 72-րդ կետով՝ «Ալաշկերտ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով:

3. **25/11/21թ. «Լ.Արցախ-09»-«ԽՄՕՄՄ-09» (13Մ2022) խաղի մասին. Խաղը չի կայացել ԽՄՕՄՄ-09 թիմի չներկայանալու պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «ԽՄՕՄՄ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետով՝ գրանցել 0:3 հաշվով տեխնիկական պարտություն «ԽՄՕՄՄ-09» թիմին և «ԽՄՕՄ մ/դպ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

4. **28/11/21թ. «Փյունիկ-1-09»-«Միկա-08» (14A027) խաղի մասին. «Միկա-08» թիմի ֆուտբոլիստ Գոռ Թումաղյանի (N 36950) հեռացման մասին (անհարգալից վերաբերմունք մրցավարի նկատմամբ):**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «Միկա-08» թիմի ֆուտբոլիստ Գոռ Թումաղյանի (N 36950) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 28-րդ կետով՝ «Միկա-08» թիմի ֆուտբոլիստ Գոռ Թումաղյանին (N 36950) որակազրկել 2 (երկու) խաղով և «ՍԱ Միկա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

5. **29/11/21թ. «Արարատ-Արմենիա-04»-«ՌԻրարտու-05» (18A041) խաղի մասին. «ՌԻրարտու-05» թիմի ֆուտբոլիստ Էդգար Ասլանյանի (N 26513) հեռացման մասին (լուրջ կոպիտ խախտում):**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «ՌԻրարտու-05» թիմի ֆուտբոլիստ Էդգար Ասլանյանի (N 26513) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 14-րդ կետով՝ «ՌԻրարտու-05» թիմի ֆուտբոլիստ Էդգար Ասլանյանին (N 26513) որակազրկել 2 (երկու) խաղով և «ՖԱ Ուրարտու» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

6. **27/11/21թ. «Օնոր Ակադեմիա-05»-«Սևան ՖԱ-06» (17B023) խաղի մասին. Խաղը չի կայացել «Սևան ՖԱ-06» թիմի չներկայանալու պատճառով):**

-----------------------------------------------------------------------------------------------------------------

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «Սևան ՖԱ-06» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետով՝ գրանցել 0:3 հաշվով տեխնիկական պարտություն «Սևան ՖԱ-06» թիմին և «Սևան ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

7. **28/11/21թ. «Գանձասար-Կապան-05»-«Սևան ՖԱ-05» (17A041) խաղի մասին. Խաղը չի կայացել «Սևան ՖԱ-05» թիմի չներկայանալու պատճառով):**

-----------------------------------------------------------------------------------------------------------------

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «Սևան ՖԱ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետով՝ գրանցել 0:3 հաշվով տեխնիկական պարտություն «Սևան ՖԱ-05» թիմին և «Սևան ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

8. **28/11/21թ. «Սևան ՖԱ-08»-«Գանձասար-Երևան-08» (14A026) խաղի մասին. «Սևան ՖԱ-08» թիմի ֆուտբոլիստ Սարգիս Գալաջյանի (N 37222) հեռացման մասին (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար):**

-----------------------------------------------------------------------------------------------------------------

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «Սևան ՖԱ-08» թիմի ֆուտբոլիստ Սարգիս Գալաջյանի (N 37222) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Սևան ՖԱ-08» թիմի ֆուտբոլիստ Սարգիս Գալաջյանին (N 37222) որակազրկել 2 (երկու) խաղով և «Սևան ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

9. **28/11/21թ. «Սևան ՖԱ-08»-«Գանձասար-Երևան-08» (14A026) խաղի մասին. «Գանձասար-Երևան-08» թիմի ֆուտբոլիստ Ալեն Ասլանյանի (N 33905) հեռացման մասին (բռնարարք՝ մրցակցին հարվածելու համար):**

-----------------------------------------------------------------------------------------------------------------

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «Գանձասար-Երևան-08» թիմի ֆուտբոլիստ Ալեն Ասլանյանի (N 33905) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետով՝ «Գանձասար-Երևան-08» թիմի ֆուտբոլիստ Ալեն Ասլանյանին (N 33905) որակազրկել 2 (երկու) խաղով և «Գանձասար ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

10. **«Նորավանք»-«Ալաշկերտ» (ՊԼ076) խաղի մասին. Հյուր թիմի դարպասապահը հերթական անգամ կրում էր ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի Կոնֆերենցիաների Լիգայի կպչուն պիտակով շապիկ:**

-----------------------------------------------------------------------------------------------------------------

*Կոմիտեն քննարկումների արդյունքում՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝*

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 72-րդ կետով՝ «Ալաշկերտ

ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով :

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար ՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Արման Ալաբերքյան

Տիգրան Խարաեյան

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

   Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:

   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: